Ռեյ Բրեդբերի

Ապրիլյան կախարդանք

Բարձր-բարձր՝ հովիտներից վեր, աստղերի տակ, գետի, լճակի, ճանապարհի վրայով թռչում էր Սեսին: Անտեսանելի՝ ինչպես նոր գարնանային քամիները, թարմ՝ ինչպես երեքնուկի բույրը մթնշաղոտ դաշտերում ճախրում էր աղավնիների մեջ թեթև, ինչպես սպիտակ կզաքիս, կանգնում էր ծառերի վրա և ապրում էր ծաղիկների մեջ, և երբ փչում էր զեփյուռը, թռչում էր ծաղկաթերթիկների հետ: Նա բնակվում էր անանուխի պես զով դեղնականաչագույն գորտի մեջ՝ շողացող գետափոսի մոտ, վազում բրդոտ շան մեջ և հաչում՝ ականջ դնելով հեռավոր ամբարներից եկող արձագանքներին: Նա ապրում էր ապրիլյան թարմ խոտի մեջ, արցունքի պես ջինջ խոնավության մեջ, որ բարձրանում էր մուշկաբույր հողից:

«Արդեն գարուն է, – մտածեց Սեսին: – Այս գիշեր ես կլինեմ աշխարհում գոյություն ունեցող ամեն մի կենդանի էության մեջ»:

Ահա նա՝ կոկիկ ծղրիդների մեջ է՝ ճանապարհների խայտաբղետ կուպրոնի վրա, կամ՝ լողում է ցողի մեջ՝ երկաթե դարպասին նստած: Իր կյանքի այս երեկոյան, երբ նա ընդամենը տասնյոթ տարեկան էր, նրա ճկուն, արագաշարժ միտքը անտեսանելիորեն ճախրում էր Իլինյոսի քամիների հետ:

«Ուզում եմ սիրահարվել», – ասել էր նա:

Այդ մասին նա խոսել էր ընթրիքի ժամին: Ծնողները զարմացած աչքերով քար էին կտրել իրենց նստած տեղերում: «Համբերություն, – եղել էր նրանց խորհուրդը, – հիշի՛ր՝ դու յուրահատուկ ես: Մեր ամբողջ ընտանիքն է անսովոր ու յուրահատուկ: Մենք չենք կարող խառնվել սովորական մարդկանց կամ ամուսնանալ նրանց հետ: Մենք կկորցնենք մեր մոգական կարողությունները, եթե այդպես վարվենք: Դու չես ցանկանում կորցնել «ճանապարհորդելու» քո մոգական կարողությունը, չէ՞: Այնպես որ, զգույշ եղիր: Զգու՛յշ եղիր»:

Սակայն վերևում, իր ննջարանում Սեսին օծանելիք ցողեց պարանոցին և պառկեց հովանոցով անկողնում՝ դողալով ու սրտի թրթիռով, մինչ կաթնագույն լուսինը բարձրացավ Իլինյոս աշխարհի վրա՝ վերածելով գետերը սերուցքի, իսկ

ճանապարհները՝ պլատինի:

—Այո, – հառաչեց նա, – ես արտասովոր ընտանիքի անդամ եմ: Մենք քնում ենք ցերեկը, իսկ գիշերը քամու հետ սավառնում՝ ինչպես սև ուրուրներ: Եթե ցանկանանք, կարող ենք ամբողջ ձմեռ քուն մտնել խլուրդների հետ տաք հողի տակ: Ես կարող եմ ապրել ամեն ինչի մեջ՝ լեռնային բյուրեղի, քրքմածաղկի, աղոթող ուխտագնացի: Ես կարող եմ իմ պարզ, հողեղեն մարմինը թողնել այստեղ, իսկ հոգիս ուղարկել հեռու՝ արկածների հետևից: Հիմա՛:

Քամին նրան քշեց-տարավ դաշտերի ու մարգագետինների վրայով:

Նա տեսավ տներից և ֆերմաներից առկայծող ջերմ գարնանային լույսերը, որ շողշողում էին մայրամուտի գույներով:

«Եթե ես ինքս չեմ կարող սիրահարվել, քանի որ պարզ ու անսովոր եմ, ուրեմն կսիրահարվեմ մեկ ուրիշի միջոցով», – մտածեց նա:

Գարնանային գիշերվա մեջ ֆերմային կից տան մոտ մի աղջիկ՝ մուգ վարսերով, մոտավորապես տասնինը տարեկան, խորը քարե ջրհորից ջուր էր հանում: Նա երգում էր:

Սեսին, վերածվելով կանաչ տերևի, ընկավ ջրհորի մեջ: Նա պառկել էր ջրհորի փափուկ մամուռի մեջ և մութ զովության մեջից նայում էր վեր: Ահա նա թռչկոտող անտեսանելի ամեոբայի մեջ է: Ահա՝ ջրի կաթիլի մեջ: Ի վերջո, սառը բաժակի ներսում նա զգաց՝ ինչպես է բարձրանում դեպի աղջկա շուրթերը: Կումերի մեղմ ձայնը լսվեց գիշերվա օդում:

Սեսին աղջկա աչքերով նայեց շուրջը:

Նրա գլխի մթության մեջ թափանցելով՝ Սեսին փայլուն աչքերի խորքից նայեց այն ձեռքերին, որ քաշում էին կոպիտ պարանը: Նրա ականջախեցիների միջոցով ականջ դրեց աղջկա աշխարհին, նրբազգաց քթանցքերով որսաց մի անծանոթ տիեզերքի բույր: Զգաց այս առանձնահատուկ սրտխփոցը, օտար լեզվի շարժումները, երբ նա երգում էր:

«Տեսնես՝ նա գիտի՞, որ ես այստեղ եմ», – մտածեց Սեսին:

Աղջիկը խորը շունչ քաշեց: Նա հայացքը հառեց գիշերային մարգագետիններին:

—Ո՞վ կա այդտեղ:

Ոչ մի արձագանք:

—Միայն քամին է, – պատասխանեց Սեսին:

—Միայն քամին, – աղջիկը դողդողալով ծիծաղեց ինքն իր վրա:

Գեղեցիկ էր աղջկա մարմինը: Քնքուշ մաշկը ծածկում էր բարեկազմ, փղոսկրի նման հրաշալի ոսկորները: Իսկ ուղեղն ասես խավարում ծաղկած վարդագույն թեյի վարդ լիներ, բերանը բուրում էր խնձորի գինու անուշահոտությամբ: Շուրթերն ամուր գրկել էին ձյունաճերմակ ատամները, հոնքերը կամարներ էին գցել աշխարհի վրա, իսկ մազերը՝ փափուկ ու նուրբ, թափվում էին կաթնագույն պարանոցի վրա: Քիթը նայում էր լուսնին, իսկ այտերը շողշողում էին փոքրիկ կրակների նման: Մարմինը փետուրի թեթևությամբ մի շարժումից մյուսն էր անցնում և, ասես, անդադար ինչ-որ բան էր երգում ինքն իրեն: Այս մարմնի, այս գլխի մեջ գտնվելը նման էր օջախի կրակից ջերմանալուն, քնած կատվի մռլտոցի մեջ ապրելուն, գիշերը դեպի ծով հոսող տաք գետակի մեջ լողալուն:

«Ինձ այստեղ դուր կգա», – մտածեց Սեսին:

— Ի՞նչ, – հարցրեց աղջիկը, ասես ինչ-որ ձայն էր լսել:

— Անունդ ի՞նչ է, – հարցրեց Սեսին զգուշորեն:

— Էնն Լիրի, – աղջիկը ցնցվեց: – Ինչու՞ բարձրաձայն ասացի:

— Էնն, Էնն, – շշնջաց Սեսին, – դու կսիրահարվես, Էնն:

Ասես ի պատասխան՝ ճանապարհից լսվեց մանրախճի վրայով շարժվող անիվների չխկչխկոցն ու ճռճռոցը: Մոտեցավ կառքը՝ ներսում մի բարձրահասակ երիտասարդ, որի ամրակազմ ձեռքերը բարձր պահել էին սանձը, իսկ ժպիտը լուսավորում էր ողջ բակը:

— Այդ դու՞ ես, Թոմ:

— Ուրիշ էլ ո՞վ, – ցատկելով կառքից՝ նա սանձը կապեց ցանկապատին:

— Ես չե՛մ խոսում քեզ հետ, – Էննը կտրուկ շրջվեց, և ջուրը ցայտեց նրա ձեռքի դույլից:

_ Ո՛չ, – բացականչեց Սեսին:

Էննը քար կտրեց: Նա նայեց բլուրներին և գարնանային առաջին աստղերին: Նա հայացքն ուղղեց դեպի այն մարդու, ում անունը Թոմ էր: Սեսին ստիպեց նրան ցած գցել դույլը:

—Տե՛ս, թե ինչ արեցիր:

Թոմը վազեց նրա մոտ:

—Տե՛ս, թե ինչ եղավ քո պատճառով:

Թոմը ծիծաղելով մաքրեց նրա կոշիկները թաշկինակով:

—Հեռացի՛ր, – նա ոտքով հարվածեց Թոմի ձեռքերին, սակայն Թոմը նորից ծիծաղեց, և հեռու-հեռվից նրան նայելով՝ Սեսին տեսավ նրա գլխի շարժումը, գանգի չափը, արծվաքիթը, աչքերի փայլը, լայն ուսերը, ամրակազմ ձեռքերը, որ թաշկինակով նրբորեն կատարում էին այս գործողությունը: Այդ գեղեցիկ գլխի գաղտնի ձեղնահարկից ցած նայելով՝ Սեսին քաշեց որովայնախոսության գաղտնի պղնձե մետաղալարը, և գեղեցիկ բերանից անմիջապես հնչեց՝ «Շնորհակալություն»:

—Օ՛, մի՞թե դու էլ կարող ես քաղաքավարի լինել:

Նրա ձեռքերի կաշվի հոտը և հագուստից եկող ախոռի հոտը հասան Էննի զգայուն քթանցքերին, և Սեսիի մարմինը հեռու-հեռվում՝ պառկած գիշերային մարգագետիններից և ծաղկաշատ դաշտերից այն կողմ, ասես երազում, անհանգիստ շարժում կատարեց:

—Միայն ո՛չ քեզ հետ, ո՛չ, – ասաց Էննը:

—Լռի՛ր, մեղմ խոսիր, – ասաց Սեսին: Նա Էննի մատները պարզեց դեպի Թոմի գլուխը: Էննը հետ քաշեց ձեռքը:

—Ես խելագարվել եմ:

—Այո, – նա գլխով արեց ժպտալով, բայց շփոթված: – Ուզում էիր դիպչե՞լ ինձ:

—Չգիտեմ: Օ՛, հեռացի՛ր, – նրա այտերն այրվում էին վարդագույն ածուխների պես:

—Ինչու՞ չես փախչում: Ես քեզ չեմ պահում, – Թոմը վեր ելավ: – Գուցե միտքդ փոխե՞լ ես: Այսօր երեկոյան ինձ հետ կգա՞ս պարելու: Դա շատ կարևոր է: Հետո կասեմ, թե ինչու:

—Ոչ, – ասաց Էննը:

—Այո՛, բացականչեց Սեսին: – Ես երբեք չեմ պարել: Ես ուզում եմ պարել: Ես երբեք խշխշացող երկար զգեստ չեմ հագել: Ուզու՛մ եմ: Ուզում եմ պարել ողջ գիշեր: Ես երբեք չեմ գտնվել պարող կնոջ մարմնում. մայրիկն ու հայրիկը երբեք թույլ չէին տա: Շներ, կատուներ, մորեխներ, տերևներ. ես տարբեր ժամանակներում փորձել եմ աշխարհի շատ բաներ, բայց երբեք չեմ եղել կնոջ մարմնում, գարնանը, այսպիսի գիշերով… Օ՛, խնդրում եմ, մենք պե՛տք է գնանք պարելու:

Նա իր միտքը տարածեց այնպես, ինչպես մատներն են տարածվում նոր ձեռնոցի մեջ:

—Լավ, – ասաց Էնն Լիրին, – ես կգամ: Չգիտեմ՝ ինչու, բայց այս երեկո ես քեզ հետ պարելու կգամ, Թոմ:

—Իսկ հիմա ներս գնա, արա՛գ, – գոչեց Սեսին: – Դու դեռ պետք է լողանաս, ասես ծնողներիդ, պատրաստես զգեստդ, վերցրու՛ արդուկը, գործի՛ անցիր:

—Մայրի՛կ, – ասաց Էննը, – ես միտքս փոխել եմ:

Կառքը սլանում էր ճանապարհին ի վար: Տան սենյակները հանկարծ կյանքով էին լցվել. լոգանքի ջուրը եռում էր, ածուխի վառարանը տաքացնում էր արդուկը՝ զգեստը արդուկելու համար, մայրիկն այս ու այն կողմ էր շտապում՝ հերակալները բերանին:

—Քեզ ի՞նչ է եղել, Էնն: Թոմը քեզ դուր չի գալիս:

—Ճիշտ է, – հանկարծ Էննը կանգ առավ գործի ամենաթեժ պահին:

«Չէ՞ որ գարուն է», – մտածեց Սեսին:

—Գարուն է, – ասաց Էննը:

«Եվ հիանալի գիշեր է պարելու համար», – մտածեց Սեսին:

—… պարելու համար, – մրմնջաց Էնն Լիրին:

Ահա և նա տաշտի մեջ է, տարածում է օճառի փրփուրը իր սպիտակ ուսերի վրա, թևերի տակ օճառի կղզյակներ ստեղծում: Նրա ջերմ կրծքերը սահում են ձեռքերի մեջ, իսկ Սեսին շարժում է նրա շուրթերը, ստիպում ժպտալ, գործել: Նա չպետք է կանգ առնի, երկմտի, այլապես այս ողջ մնջախաղը կփլուզվի: Էնն Լիրին պետք է շարժման մեջ լինի, գործի, այստեղ լվա, այնտեղ օճառ քսի: Իսկ այժմ՝ դու՛րս: Չորանա՛լ սրբիչով: Օծանելի՛ք: Դիմափոշի՛:

—Է՛յ, դու՛, – գոչեց Էննը հայելու մեջ իր արտացոլանքին՝ ամբողջովին ճերմակ ու վարդագույն՝ նման շուշանների ու մեխակների: – Ո՞վ ես դու այս երեկո:

—Տասնյոթամյա աղջնակ, – Սեսին նայեց իր մանուշակագույն աչքերից: – Դու ինձ չես տեսնում: Գիտե՞ս, որ ես այստեղ եմ:

Անն Լիրին օրորեց գլուխը.

—Իմ մարմինն ապրիլյան կախարդի ձեռքերում է, վստահ եմ:

—Մոտ ես, շատ մոտ, – ծիծաղեց Սեսին: – Իսկ հիմա հագնվի՛ր:

Ի՛նչ հաճելի է, երբ գեղեցիկ զգեստը գրկում է փթթող մարմինը: Իսկ դրսից արդեն կանչում են:

—Է՛նն, Թոմն այստեղ է:

—Ասա նրան, որ սպասի, – Էննը հանկարծ նստեց: – Ասա նրան, որ ես չեմ գնում պարելու:

—Ի՞նչ, – ասաց մայրը՝ կանգնած դռան արանքում:

Սեսին ակնթարթորեն կենտրոնացրեց ուշադրությունը: Այդպիսի ճակատագրական պահին նա շեղվել էր, միայն մի ակնթարթ լքել էր Էննի մարմինը: Նա լսել էր ձիերի սմբակների հեռավոր ձայնը, լուսնի լույսով լուսավորված ճանապարհով սլացող անիվների ճռռոցը: Մի պահ մտածել էր գնալ և գտնել Թոմին, թափանցել նրա մտքերի մեջ և հասկանալ, թե ինչ է զգում նման երեկոյին քսաներկուամյա երիտասարդը: Այսպես նա սլացել էր հավամրգու դաշտերի վրայով, ապա միանգամից հետ թռել, ինչպես թռչունը՝ դեպի իր վանդակ, իսկ հիմա սոսափում, գալարվում էր Էնն Լիրիի գլխում:

— Ասա՛ նրան՝ թող գնա:

—Է՛նն, – Սեսին հարմարվեց՝ տարածելով իր մտքերը:

Բայց Էննը կատաղության մեջ էր:

—Ո՛չ, ո՛չ, ես ատում եմ նրան:

«Ես չպետք է հեռանայի, նույնիսկ մեկ ակնթարթ: – Սեսին իրեն ենթարկեց երիտասարդ աղջկա ձեռքերը, սիրտը, գլուխը: Մեղմորեն, նրբորեն…- Կանգնի՛ր»:

Էննը ոտքի ելավ:

—Հագի՛ր վերարկուդ:

Էննը հագավ վերարկուն:

—Իսկ հիմա քայլի՛ր:

«Ո՛չ», – մտածեց Էնն Լիրին:

—Քայլի՛ր:

—Է՛նն, – ասաց Էննի մայրը, – հերիք է սպասեցնես Թոմին: Հենց հիմա դուրս արի՝ և առանց հնարքների: Քեզ ի՞նչ եղավ:

—Ոչինչ, մայրիկ: Բարի գիշեր: Մենք ուշ կվերադառնանք:

Էննն ու Սեսին սլացան գարնանային երեկոյին ընդառաջ:

Սենյակ՝ լի նրբորեն պարող աղավնիներով, որ քնքշորեն ծածանում էին իրենց հանդարտ փետուրները, սենյակ՝ լի սիրամարգներով, սենյակ՝ լի ծիածանի գույներով փայլող աչքերով ու լույսերով: Եվ այս ամենի կենտրոնում պարելով պտտվում, պտտվում, պտտվում էր Էնն Լիրին:

—Օ՛, ի՛նչ հրաշալի երեկո է, – ասաց Սեսին:

— Հրաշալի երեկո է, – կրկնեց Էննը:

— Դու տարօրինակ ես, – ասաց Թոմը:

Երաժշտությունը նրանց մշուշի մեջ էր առել, երգի հոսանքների մեջ նրանք լողում էին, ծածանվում, սուզվում, նորից ելնում՝ շունչ քաշելու, նրանք շնչահեղձ էին լինում, կառչում էին միմյանցից, ինչպես խեղդվողներ, և նորից ու նորից «Գեղեցիկ Օհայո»-ի հնչյունների ներքո պտտվում սիրառատ պտույտներով, շշուկների ու շշունջների մեջ:

Սեսին ձայնակցում էր: Էննի շուրթերը հեռացան, և հնչեց երաժշտությունը:

—Այո, ես տարօրինակ եմ, – ասաց Էննը:

—Դու քեզ նման չես, – ասաց Թոմը:

—Այսօր՝ ոչ:

—Դու այն Էնն Լիրին չես, ում ես ճանաչում եմ:

—Այո, ճիշտ ես, ճիշտ ես, – շշնջաց Սեսին մղոնների հեռավորությունից:

—Ճիշտ ես, – հնչեց Էննի շուրթերից:

—Ես տարօրինակ զգացողություն ունեմ, – ասաց Թոմը:

—Ինչի՞ հետ կապված:

—Քեզ հետ, – նա էննին հեռացրեց իրենից և, պտտելով նրան, նայեց նրա վարդագույն դեմքին՝ ասես ինչ-որ բան որոնելով: – Քո աչքերը, – ասաց նա: – Ես ոչինչ չեմ հասկանում:

—Տեսնու՞մ ես ինձ, – հարցրեց Սեսին:

—Քո մի մասն այստեղ է, Էնն, իսկ մյուս մասը՝ ոչ, – Թոմը զգուշորեն պտտում էր նրան. նրա դեմքն անհանգիստ էր:

—Այո:

—Ինչու՞ եկար ինձ հետ:

—Ես չէի ցանկանում գալ, – ասաց Էննը:

—Այդ դեպքում ինչու՞ եկար:

—Ինչ-որ բան ստիպեց ինձ գալ:

—Ի՞նչ:

—Չգիտեմ, – Էննի ձայնում թեթև նյարդայնություն կար:

—Դե, դե, լռի՛ր, լռի՛ր, – շշնջաց Սեսին: – Այդպես: Պտտվի՛ր, պտտվի՛ր:

Սենյակի մթության մեջ նրանք շշնջում ու սոսափում էին, ճախրում ու իջնում էին, իսկ երաժշտությունը պտտում ու ոգևորում էր նրանց:

—Ամեն դեպքում դու եկար պարելու, – ասաց Թոմը:

—Այո, – պատասխանեց Սեսին:

—Այստեղ արի, – նա պարելով Էննին տարավ դեպի բաց դուռը և դանդաղ հեռացրեց նրան դահլիճից, երաժշտությունից, մարդկանցից:

Նրանք միասին բարձրացան կառքը և նստեցին:

—Էնն, – ասաց նա՝ Էննի ձեռքերն առնելով իր դողացող ձեռքերի մեջ, – Էնն, – նա այնպես արտաբերեց նրա անունը, ասես դա նրա անունը չլիներ: Նա շարունակում էր նայել Էննի գունատ դեմքին: Այժմ նրա աչքերը բաց էին:

—Էնն, կար ժամանակ, երբ ես սիրում էի քեզ: Դու դա գիտես, – ասաց նա:

—Գիտեմ:

—Բայց դու միշտ այնքան անկայուն ես եղել, իսկ ես չեմ ցանկացել անտեղի տառապել:

—Սարսափելի ոչինչ չկա: Մենք դեռ շատ երիտասարդ ենք, – ասաց Էննը:

—Ոչ, ոչ, ես ուզում էի ասել՝ կներես ինձ, – ասաց Սեսին:

—Ի՞նչ նկատի ունես, – Թոմը բաց թողեց նրա ձեռքերը և լրջացավ:

Գիշերը ջերմ էր, հողի բույրը պարուրել էր նրանց, իսկ թարմ ծառերի տերևները մեղմ շնչում էին իրենց տերևների սոսափյունով ու շրշյունով:

—Չգիտեմ, – ասաց Էննը:

—Բայց ե՛ս գիտեմ, – ասաց Սեսին, – դու բարձրահասակ ես, դու աշխարհի ամենագեղեցկատես տղամարդն ես: Այսօր հրաշալի երեկո է: Ես միշտ կհիշեմ այս երեկոն, որ քեզ հետ եմ անցկացրել: – Նա Էննի օտար, սառը ձեռքը պարզեց դեպի Թոմի դիմադրող ձեռքը, որպեսզի կրկին բռնի այն, ջերմացնի, ամուր սեղմի:

—Բայց ի՞նչ է եղել քեզ այսօր, – ասաց Թոմը՝ թարթելով աչքերը: – Մեկ մի բան ես ասում, մեկ՝ ուրիշ: Այս գիշեր ես քեզ պարելու հրավիրեցի հանուն հին հուշերի: Եվ ես սկզբում ոչինչ նկատի չունեի: Իսկ հետո, երբ կանգնած էինք ջրհորի մոտ, ես հասկացա, որ դու փոխվել էիր, իսկապես փոխվել էիր: Դու ուրիշ էիր: Ինչ-որ նոր, քնքուշ բան կար, մի բան… – նա փորձում էր հարմար բառ գտնել: – Չգիտեմ, չեմ կարող ասել: Քո արտաքինում… Ձայնում… Եվ ես գիտեմ. ես նորից սիրահարված եմ քեզ:

—Նրա՛ն չէ, – բացականչեց Սեսին, – ի՛նձ:

—Եվ ես վախենում եմ քեզ սիրահարվել, – ասաց նա: – Դու նորից ինձ ցավ կպատճառես:

—Հնարավոր է, – ասաց Էննը:

«Ոչ, ոչ, ես ամբողջ սրտով կսիրեմ քեզ, – մտածում էր Սեսին: – Էնն, ասա՛ նրան, ասա՛ դա իմ փոխարեն: Ասա, որ ամբողջ սրտով կսիրես նրան»:

Էննը ոչինչ չասաց:

Թոմը դանդաղ մոտեցավ նրան և ձեռքը մոտեցրեց նրա կզակին:

—Ես հեռանում եմ: Ես աշխատանք եմ գտել այստեղից հարյուր մղոն հեռու:

Կկարոտե՞ս ինձ:

—Այո, – ասացին Էնն ու Սեսին:

—Նշանակում է՝ կարո՞ղ եմ քեզ հրաժեշտի համբույր տալ:

—Այո, – ասաց Սեսին, մինչ Էննը կհասցներ պատասխանել:

Թոմը շրթունքները մոտեցրեց այդ օտար բերանին: Նա դողալով համբուրեց այդ օտար բերանը:

Էննը քարացել էր սպիտակ արձանի նման:

—Է՛նն, – ասաց Սեսին, – շարժիր ձեռքերդ, գրկիր նրան:

Էննը լուսնի լույսի ներքո ասես փայտե քանդակ լիներ:

Թոմը համբուրեց նրա շուրթերը:

—Ես սիրում եմ քեզ, – շշնջաց Սեսին, – ես այստեղ եմ: Այդ ինձ ես դու տեսնում նրա աչքերում, ի՛նձ, և ես կսիրեմ քեզ, նույնիսկ եթե նա երբեք չսիրի:

Թոմը մի կողմ քաշվեց՝ այնպիսի տեսքով, ասես մղոններ էր վազել: Նա նստեց Էննի կողքին:

—Չեմ հասկանում՝ ինչ է կատարվում: Մի պահ…

—Ի՞նչ, – հարցրեց Սեսին:

—Մի պահ ինձ թվաց… – նա ձեռքերը մոտեցրեց աչքերին: – Կարևոր չէ: Քեզ տուն տանե՞մ հիմա:

—Այո, խնդրում եմ, – ասաց Էնն Լիրին:

Նա մտրակեց ձիուն, հոգնած քաշեց սանձերը, և կառքը շարժվեց: Չխկչխկում էին անիվները, հարվածում մտրակները, և սլանում էր կառքը՝ լուսավորված լուսնի լույսով, իսկ շուրջը գարնանային գիշերն էր՝ ժամը 11-ը, և շուրջբոլորը սահում էին փայլփլուն մարգագետիններն ու երեքնուկի անուշաբույր դաշտերը:

Եվ Սեսին, նայելով դաշտերին ու մարգագետիններին, մտածեց. «Արժե, արժե ամեն ինչ տալ՝ այսօրվանից և ընդմիշտ նրա հետ լինելու համար»: Եվ նա կրկին լսեց իր

ծնողների աղոտ ձայնը. «Զգույշ եղիր: Դու չես ցանկանում հասարակ մահկանացուի հետ ամուսնանալով կորցնել քո մոգական կարողությունները, չէ՞: Զգույշ եղիր: Քեզ դա դուր չէր գա»:

«Այո, այո, – մտածում էր Սեսին, – ես նույնիսկ դրանցից կհրաժարվեի, հիմա և այստեղ, եթե նա ինձ հետ լիներ: Այլևս կարիք չէր լինի թափառել գարնանային գիշերներով, ապրել թռչունների, շների, կատուների, աղվեսների մարմիններում: Ինձ միայն նա է պետք: Միայն նա: Միայն նա»:

Նրանք հետևում էին թողնում շշնջացող ճանապարհը:

—Թոմ, – վերջապես ասաց Էննը:

—Ի՞նչ, – նա սառը հայացքով նայում էր ճանապարհին, ձիուն, ծառերին, երկնքին, աստղերին:

—Եթե երբևէ հայտնվես Իլինյոսում՝ Գրին Թաունում, այստեղից մի քանի մղոն հեռավորության վրա, կարո՞ղ ես ինձ մի լավություն անել:

—Հավանաբար:

—Կարո՞ղ ես ինձ լավություն անել ու այցելել ընկերուհուս, – ասաց Էնն Լիրին հապաղելով, անվստահորեն:

—Ինչու՞:

—Նա իմ լավ ընկերուհին է: Ես նրան պատմել եմ քո մասին: Ես քեզ կտամ նրա հասցեն: Մի րոպե սպասիր:

Երբ կառքը կանգնեց նրա ֆերմայում, նա իր փոքրիկ պայուսակից թուղթ ու մատիտ հանեց և, թուղթը սեղմելով ծնկին, գրեց լուսնի լույսի ներքո:

—Ահա: Կարողանու՞մ ես կարդալ:

Նա մի հայացք գցեց թղթին և մտահոգ գլխով արեց:

—Սեսի Էլիոթ, Ուիլոու Փողոց, 12, Գրին Թաուն, Իլլինոիս, – կարդաց նա:

—Կայցելե՞ս նրան մի օր, – հարցրեց Էննը:

—Կաշխատեմ, – ասաց նա:

—Խոստանու՞մ ես:

—Ես ի՞նչ կապ ունեմ այս ամենի հետ, – գոռաց նա զայրացած: – Ինչի՞ս են պետք այս թղթերը, անունները:

Նա ճմռթեց թուղթը և խցկեց վերարկուի գրպանը:

—Խնդրում եմ, խոստացիր… – թախանձում էր Սեսին:

—…խոստացիր, – ասաց Էննը:

—Լավ, լավ, միայն թե հանգի՛ստ թող ինձ, – գոռաց նա:

«Հոգնել եմ, – մտածեց Սեսին, – այլևս չեմ կարող մնալ, պետք է տուն գնամ: Ես կորցնում եմ ուժերս: Իմ ուժերը միայն մի քանի ժամ են հերիքում գիշերը թափառելու, ճանապարհորդելու համար: Սակայն մինչ գնալս…»:

—…մինչ գնալս, – ասաց Էննը:

Նա համբուրեց Թոմի շուրթերը:

—Այդ ես եմ համբուրում քեզ, – ասաց Սեսին:

Թոմը հեռացրեց նրան իրենից և նայեց Էնն Լիրիին, թափանցեց նրա հոգու խորքերը: Նա ոչինչ չասաց, սակայն նրա դեմքը դանդաղ, շատ դանդաղ սկսեց խաղաղվել, կնճիռներն անհետացան, կարծր բերանը փափկեց: Նա հայացքը սևեռել էր Էննի՝ լուսնի լույսով ողողված դեմքին:

Ապա իջեցրեց նրան կառքից և արագ, նույնիսկ առանց բարի գիշեր մաղթելու, սլացավ ճանապարհով:

Սեսին լքեց Էննի մարմինը:

Էնն Լիրին մի ճիչ արձակեց և, ասես կապանքներից ազատված, դեպի տուն վազեց լուսնի լույսով ողողված ճանապարհով ու շրխկացրեց դուռը:

Սեսին միայն մի ակնթարթ վարանեց: Ծղրիդի աչքերով նա տեսավ գիշերային գարնանային աշխարհը: Մի պահ նայելով գորտի աչքերից՝ նա միայնակ նստեց լճակի մոտ: Լուսնի շողերով ողողված ծփու բարձրությունից գիշերային թռչունի աչքերով ցած նայեց ու տեսավ՝ ինչպես երկու տներում մարեցին լույսերը. մեկը՝ այստեղ, մյուսը՝ այստեղից մի մղոն հեռու: Նա մտածում էր իր և իր ընտանիքի, իր արտասովոր ուժի և այն մասին, որ իր ընտանիքի ոչ մի անդամ չէր կարող ամուսնանալ այս բլուրներից այն կողմ գտնվող հսկայական աշխարհի մարդկանցից որևէ մեկի հետ:

«Թո՛մ, – նրա հյուծված հոգին թռչնի մարմնի մեջ թռչում էր ծառերի տակ, վայրի մանանեխի խիտ դաշտերի վրայով: – Թուղթը դեռ քեզ մո՞տ է, Թոմ: Կգա՞ մի ժամանակ, մի օր, մի տարի, երբ կգաս ինձ մոտ: Կճանաչե՞ս ինձ: Կնայե՞ս դեմքիս և կհիշե՞ս՝ որտեղ ես ինձ տեսել վերջին անգամ, կզգա՞ս, որ սիրում ես ինձ այնպես, ինչպես ես քեզ՝ ընդմիշտ, ամբողջ սրտով…»:

Նա կանգ առավ զով օդում՝ քաղաքներից ու մարդկանցից միլիոնավոր մղոններ

հեռու, ֆերմաներից ու դաշտերից, գետերից ու բլուրներից վեր:

«Թո՞մ»:

Թոմը քնած էր: Խորը գիշեր էր: Նրա հագուստը ծալված էր աթոռների վրա, կոկիկ կախված անկողնու հենակին: Իսկ նրա գլխի մոտ՝ սպիտակ բարձի վրա, դեպի վեր պարզած ձեռքում փոքրիկ թղթի կտորն էր՝ վրայի գրվածքով: Դանդաղ, շատ դանդաղ փակվեցին նրա մատները՝ իրենց մեջ ամուր սեղմելով թղթի կտորը: Նա նույնիսկ չշարժվեց և չնկատեց, երբ սև կեռնեխը մեղմորեն ու քնքուշ հարվածեց լուսնի ջինջ բյուրեղներ հիշեցնող պատուհանի ապակուն, ապա թրթռաց մեղմորեն, կանգ առավ և քնած աշխարհի վրայով ճախրեց դեպի արևելք:

Թարգմանությունը՝ Լիլիթ Հովհաննիսյանի